№ 52 Մարտի 21 (Ապրիլի 2) 1881 Մարտի 21 (Ապրիլի 2) № 52

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբ., կէս տարվանը 6 րուբ.:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Բաժանորդագրողները դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարվում են
իւրաքանչիւր տողին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նիկոլայ Ռուբինշտայն. Նամակ Մոսկվայից. Նամակ Գանձակից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խառնիւր. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մեր ժողովրդական գրականութիւնը.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԻԿՈԼԱՅ ՌՈՒԲԻՆՇՏԱՅՆ

Ընթերցողին յայտնի է արդէն „Մշակի" մէջ տպված Մոսկվայի նամակից, որ մարտի 11-ին վախճանվեցաւ Փարիզում երեւելի ռուս երաժիշտ Նիկոլայ Գրիգորիչ Ռուբինշտայն:

Նիկոլայ Ռուբինշտայն ծնվեցաւ Մոսկվայում 1835 թւին, հրէայ ծնողներից, թէեւ ծնողքն պատկանում էր քրիստոնէական դաւանութեանը:

Ուրեմն հանգուցեալը այժմ 46 տարեկան էր:

Հինգ տարեկան ժամանակ նա իր մօր առաջնորդութեամբ սկսեց ուսանել երաժշտութիւնը, որի մէջ մեծ առաջադիմութիւն և ընդունակութիւն ցոյց տուեց: Եօթ տարեկան հասակում նա արդէն հրապարակաւ ածում էր: Դեռ եւս մանուկ հասակում նա իր մեծ եղբօր, Անտոն Ռուբինշտայնի հետ, որ դեռ կենդանի է և որ գրել է ռուսաց մի քանի օպերաներ, միասին սկսեցին ճանապարհորդել և կոնցերտներ տալ Հոլանդիայում, Անգլիայում և Գերմանիայում: Այդ ժամանակ, երկու տարվայ ընթացքում, երեւելի երաժիշտներ Դէն և Կուլլակ պարապում էին երիտասարդ Նիկոլայի երաժշտական կրթութեամբ: Բայց 1846 թւին ընտանեկան հանգամանքները ստիպեցին Ռուբինշտայնի մօրը կրկին վերադառնալ Մոսկվա, ուր և Նիկոլայ և Անտոնը մտան համալսարանի իրաւաբանական բաժինը: Նիկոլայ աւարտեց իր ուսման ընթացքը 1855 թւին:

Հանգուցեալի հասարակական գործունէութիւնը սկսվում է վաթսուներորդ թւականներից, երբ որ հիմնվեցաւ ռուս երաժշտական ընկերութիւնը, որ ապագայում սաստիկ հռչակ անուն ստացաւ:

Արդէն 1866 թւին Ն. Գ. Ռուբինշտայն բացեց Մոսկվայում երաժշտական բարձրագոյն դպրոց, կոնսերվատորիա, որին նա իր ամբողջ կեանքը, իր տաղանդի ամբողջ զօրութիւնը զոհեց:

Ասում են որ երբ երկու տարի սրանից առաջ երեւելի ջութակ ածող Վենիավսկու մարմնի յուղարկաւորութեան ժամանակ հաւաքվեցան յուղարկաւորութեան հանդիսին հանգուցեալի բազմաթիւ յարգողները, նրան վերջին հրաժարական ողջոյնը տալու համար, Ռուբինշտայնը որ նրանց մէջն էր ասեց. «Ահա շուտով և ինձ ճանապարհ կը դնեն, բայց արդեօք այսչափ բազմութիւն կը հաւաքվի իմ դագաղի շուրջ կամ"…

Նախազգացմունքը չը խաբեց երեւելի երաժշտին:

Հանգուցեալի մարմինը բերում են Մոսկվա, որտեղ և կը թաղեն նրան:

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Մարտի 7-ին

Ասում են որ կանայք այժմ պահանջում են իրանց համար ազատագրական հասարակ իրաւունքներ և ազատութիւն՝ և եթէ այդ ասում են նոյնպէս հայ կնոջ վրա ասա է, չը հասկանալ, որովհետեւ մեր հայուհին բոլորովին զուրկ լինելով մարդկային իրաւունքներից՝ եղել է եւ դեռ շատ ժամանակ պիտի մնայ իբրեւ հարեմական կին: Եւ եթէ լսել էք, որ հեռաւորութիւնից մի հայուհի ձայն է տալիս իր համար նոյնպէս ազատութիւն և հասարակ իրաւունք պահանջելով, զարմանալ պէտք է, չը հասկանալ. դա միայն ժամանակաւոր ցնորք էր, նրա ասածը լոկ խօսք էր, քամի էր, զրանով միայն նա կամեցել է մոդային հետեւել, որովհետեւ լսել է որ Եւրոպայում այժմ կանայք այդպիսի պահանջներ են յայտնում, ուստի և իր պարտքն է համարել այս դէպքում եւս իրան մոդա հետեւել նրանց, ինչպէս և հետեւում էր առաջ նրանց միւս արտաքին մոդաներին՝ թէ շլէյֆի վերաբերութեամբ և թէ պարահանդէսներ և կլուբներ յաճախելով:

Հայ կինը թէթեւամիտ և մոդաների սիրող լինելով, ի հարկէ չէ կարող զսպել իրան տուած միջոցներով, որպէս զի սահման իր ցանկացած զրութիւնը հասարակութեան մէջ: Բայց արդարեւ եթէ նա էլ ունի այդպիսի ձգտումներ՝ թող խնդրէ որ այդ իրաւունքները պահանջելուց առաջ՝ պէտք է կատարէ իր պարտքը դէպի հասարակութիւնը մանաւանդ և դէպի մարդկութիւնը առհասարակ: Հայուհուն մեր այս զրութեան մէջ տուած են այնպիսի միջոցներ, որոնցով նա կարող է իրան վայել վիճակի հասնել:

Բայց հայ կինը ընդհակառակը ինքը իր ձեռքով ի չարն է գործ դնում իրան տուած միջոցները, նա ինքը փախչում է իր ցանկացած իրաւունքներից: Եւ ինչու, որովհետեւ նա դեռ եւս զուրկ է մտաւոր կեանքից: Այսօր երբ ազգը մի կողմից ճնշում, կողոպտում են բարբարոսները և ինքը ամէնայն կառավարութիւնը, խեղդում են թանկութիւնը, աղքատութիւնը և սովը, երբ նրա փրկութիւնը կախված է մեզնից, մեր առատաձեռնութիւնից, երբ ամեն մի հայ շտապում է օգնել իր եղբայրներին, հայ կինը անտարբեր է, հայ կինը կարծես մարդ չէ, ազգութեան անդամ չէ, նա չէ օգնում սովեալներին, չէ մասնակցում ընկերութիւններին և ինքն էլ չէ կազմում. ոչ, այդ նրա գործն ու պարտքը չէ, նրա գործն է միայն սենեակի զարդը լինել:

Թող հայ քոյրը օգնէ իր կիսամեռ եղբայրներին և քոյրերին իր կարողութեան չափ, կատարէ իր պարտքը դէպի ազգութիւնը, դէպի մարդկութիւնը, գործէ համարձակ գանէ իր եղբօր կիսաչափ, և թող հաւատայ որ վերջը եւ իր ցանկացած ազատութիւնը պիտի ստանայ: Ուրեմն հասարակութեան անդամի իրաւունքներ տալու կամեցողը առաջ պէտք է հասկանայ և իր պարտքը: Փարիզեցին ու կլուբը, լոտոն ու թեթեւսոլիկը նրան չեն տայ իրաւունքներ, այլ նրա ձեռքով արած այն բարեգործութիւնները և յառաջադիմութիւնը, որ պիտի նպաստեն իր ազգին փրկելու գործը յաջողութեամբ առաջ տանելու:

Աւելի թէ գաւառական քաղաքների կանանց մէջ դեռ չէ թափանցել լուսաւորութեան ու զարգացման նշոյլը, ուրեմն նրանք չեն հասկանում, բայց Թիֆլիսի, Մոսկվայի, Ս. Պետերբուրգի և այլ մեծ քաղաքների լուսաւորված հայուհիները մինչեւ երբ պէտք է այսպէս տանջանքը և անտարբեր մնան, և երբ բարի օրինակ պէտք է ցոյց տան խեղճ հայաստանցի կանայք:

Ա. Ա.

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Մարտի 13-ին

Մեր քաղաքի հոգեւոր-երկսեռ դպրոցները ճնշվել են անտէր-անտիրական. տեսուչ չը կայ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԷԹՆՈԼՕԳԻԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

III. Առածները և ասածները

Աւելորդ չենք համարում ասել մի քանի խօսք ժողովրդական առածների մասին: Ժողովուրդը նկատելով կեանքի այս կամ այն երեւոյթները, մարդկանց միմեանց հետ յարաբերութիւնները—լաւ կամ վատ գործերը—իրեն կարծիքը և հայեացքը յայտնում է առանձին նախադասութիւններով, որոնք պարունակում են մի որ իցէ ճշմարտութիւն, ի հարկէ ժողովրդի զարգացմանը համապատասխան: Այս կարճ, շատ անգամ ոտանաւորի ձեւ ստացած նախադասութիւնները, մենք անուանում ենք «առածներ» (пословица). Բայց հարկաւոր չէ խառնել «առածները», «մեծամասնաց (մեծաց) ասածներին» (поговорка). Առածի և ասածի մէջ թէ ներքին կողմից և թէ արտաքին մեծ զանազանութիւն կայ. առածը պարունակում է իր մէջ մի ճշմարտութիւն կամ փիլիսոփայական միտք, իսկ ասածը (поговорка) շատ ժամանակ արտայայտութիւն է, որը համեմատվում են խօսակցութեան ժամանակը նրա բովանդակութեամբ. առածը վերաբերում է ժողովրդական փիլիսոփայութեանը և արտայայտում է ժողովրդի հայեացքը կեանքի զանազան երեւոյթների վրա, մինչդեռ ասածը ցոյց է տալիս նրա արտաքին ոճաւորութիւնը: Արտաքին կողմից առածների և ասածների զանազանութիւնը կայանում է նրանում, որ առածները բառ միմի մասին բովանդակում են «եթէ» շաղկապով, ասելով այսպիսի կերպով նրանց ներքին մասին պայմանական ձեւ, բայց երբեմն «եթէ» շաղկապը բաց են թողնում, առածը, եթէ կարելի է այսպէս ասել, կրճատվում է, և այն ժամանակ «առածից» դժուար է զանազանվում: Այս պատճառով ներքին միտքը աւելի ամուր սկզբն է (критерій), որով մենք կարող ենք առածները զատել ասածներից: Ահա, օրինակի համար, մի քանի առածներ. 1. «Թէ եղը զառի (այծառի) եղն աւելի, շատ մարդ իր մէջը կուտէր»: Այս առածի ներքին միտքը այն է՝ թէ հարկաւոր չէ ծառայել միայն իր օգտին, այլ և ուրիշներին, հասարակութեանը. ուրիշ խօսքերով ժողովուրդը պահանջում է եսութեան հակառակութիւնը. 2. «(Եթէ) գելին գծերը նշանը (ցոյց) չը տայ, արդարութեան մասին (ճանապարհը) չի ճանաչի». այսինքն եթէ չար անօրինակ մարդուն չը պատժեն, նա ճշմարտութիւնը չէ կարող ճանաչել և ուրիշներին միշտ կը վնասի: Ահա երկու առածներ, որոնցից վերջինը կրճատուած է: Կեր ասելով այժմ մի քանի ասածներ. 1. «Կորուստի (ոջիլի) գլխին խաչերի (զարդի) վրա, (նա) գլորվում ընկաւ ցեխի մէջը». այսինքն կեղտոտ ու չնչին մարդը չէ կարող զբաղեցնել իրան տուած պաշտօնը: 2. «Իշխին ասէ գլխին մի մարգարիտ խարզիր, ասէ վիզիցս քաղով տուեցէք», այսինքն չնչին մարդուն ասածին քաղաքավարութիւն ցոյց տուր, բայց նա ցոյց տուեց իր անքաղաքավարութիւնը: 3. «Կճուճը (պուտը) տասն տակս ունի է, չիրեկիր տասէ՞ բառ ես որ պատեցից եմ գալում (գալիս)»: Այստեղ կճուճը ներկայացնում է այն ինքնահաւան մարդը, որ իր պակասութիւնները ցոյց է տալիս ինչպէս լաւ յատկութիւններ, իսկ չիրեկիր ընդհակառակը—պարզամիտ ու ճշմարտախօս մարդը, որը միշտ նահանգների ասէ համեմատ է, ծածկելով նրա պակասութիւնները:

Այս օրինակներից երեւում է՝ որ ժողովուրդը մարդկային լաւ կամ վատ յատկութիւնները, միմեանց հետ յարաբերութիւնները համեմատում է զանազան կենդանիների, անասունների և անշունչ առարկաների գործերի, արարմունքների և յատկութիւնների. ուստի առածները միշտ արտայայտվում են այլաբանական (аллегорическій) և փոխաբերական ձեւով:

Վերեւում ասացինք՝ թէ առածները և ասածները պարունակում են միշտ կամ ճշմարտութիւն կամ արտայայտութիւններ: Այդ ճշմարտութիւններից շատերը մինչեւ այժմ էլ չեն կորցրել իրենց նշանակութիւնը, բայց կան և այնպիսիները, որոնք կորցրած լինելով շատ հին ժամանակից և անցնելով մինչ զարգացման միւս աստիճան, մինչ ներկայիս մասին, կորցնում են իրենց նախկին նշանակութիւնը, այնպէս որ նրանց արտայայտած ճշմարտութիւնները էլ չեն համապատասխանում ժողովրդի զարգացման աստիճանին և ժամանակի ոգուն: Եթէ ժողովուրդը մինչեւ այժմ էլ կրկնում է այսպիսի առածները, պատճառը այն է, որ ժողովուրդը շուտով չէ մոռանում իր հին սովորութիւնները և աւանդութիւնները, այսպէս մեծ դեր է խաղում «հնապաշտութիւնը» (консерватизмъ): Այսպիսի առածները նշանակութիւն ունեն միայն ժողովրդի անցեալը ուսումնասիրելու համար: Վերցնենք օրինակի համար հետեւեալ առածը. «Մեր մեռելները, մեր ձեռքերը (որդիք)»: Ահա այս առածի միտքը «մեր մեռածների հոգուն հացը—քլէէկը, թող ուտեն մեր որդիքը»: Արդար չէ արդեօք այս միտքը: Այո, սխալ է և չէ համապատասխանում ոչ մեր ժամանակին և ոչ մեր հայեացքին: Մեր ներկայիս քաղաքում է՝ թէ հոգւոյ հացը հարկաւոր է բաժանել աղքատներին, իսկ ժողովուրդը բոլորովին հակառակ միտք է յայտնում: Ցանկալի ենք միայն կը յաջողվի ապացուցանել՝ թէ այս առածը շատ հին ժամանակից է և շարադրված է քրիստոնէութիւնը Հայաստանում տարածվելուց առաջ. եթէ գործին նայենք կոպտաշատութեան կէտից, յիշեալ առածը բոլորովին սխալ չէ:

Ներեցէք, ընթերցող, որ մենք շեղվելով հարցից կը խօսենք ուրիշ ազգերի և ուրիշ դարերի մասին: Ինչպէս էին կառավարում «Ռեակ» հնդկա-գերմանական ազգերը այն ժամանակը, երբ նրանք դեռ ստորանակարգված ընտանեկան-ցեղական (семейно-родовой) ու նահապետական զրութեան մէջ էին, երբ ամեն մի ցեղ (родъ) առանձին էր ապրում ուրիշ իր նման ցեղերից: Բազմաթիւ քրիստոնէութեան այս տարածման վրա, ամեն մարդ, որ չէր պատկանում ցեղին, նրա թշնամին էր համարվում (տես. «Древнія учрежденія» Мэнъ-ի, երես 54): Ամեն այդպիսի ցեղեր իրանց նախնեաց Աստուածոյ տեղ էին պաշտում, կարծելով թէ նրանք կենդանի են մնում մեռնելուց յետոյ, պահում են ամենայն մեր հաւատացեալ կեանքը: Աստուածացված նախնիքը պաշտպանում էին իրենց յետնորդի սերունդը—ամբողջ ցեղը—զանազան փորձանքներից, չարերից. աստուածացնում էին ցեղի պատերի հոգիները և այլն: Այս պատճառով էլ ժառանգները—ցեղի բոլոր անդամները իրենց պարտքն էին համարում ի պատիւ նախնեաց զոհաբերութիւններ անել, նրանց փառաբանել և աղօթել: Ամեն մի ցեղ ունէր իրեն առանձին «ցեղական սրբազանութեան» օրերը, որը հին հռոմայեցիք անուանում էին «sacra gentilia»: Այդ սրբազանութեան օրերը ցեղի բոլոր անդամները զինուած զինվորականաւոր, տանում էին իրենց հետ զանազան կերակուրներ և ըմպելիք: Ցեղական առաջնորդը յետոյ այդ կերակուրները մատուցանում ութեմական տեսուչն էլ այնքան հեռատեսութիւնից չէ կարող նկատել. մեր հոգաբարձուաց ժամանակն էլ լրացած լինելով շատ անփոյթ են շարժվում: Անցեալ ամի նոյեմբեր ամսում մեր յաջորդը հրաւիրելով հաւաքեց նրա մօտ 12 հոգի, իրանց վրա առնելով «հասարակութեան» անունը և գլխաւորապէս ընտրեցին իրենց միջից հոգաբարձուներ: Ասում են թերթը առաջարկված է ի հաստատութիւն նորին վեհափառութեան. մինչև այժմ սպասում ենք, ոչինչ լուր չը կայ: Մենք լաւ համոզուած ենք, որ այդ ընտրութիւնը, իբրև անկանոն, չէ հաստատվելու, բայց մեր դպրոցների օգուտը պահանջում է եթէ չէ հաստատվելու, գոնէ թերթը վերադարձնէլի նոր ընտրութիւն անելու համար:

Քաղաքիս սուրբ Յովհաննէս մայր եկեղեցու երեցփոխանի երկրամեայ ծառայութեան ժամանակը լրանալու վրա է. յաջորդ առաջին խիստ անզգամ լինելով կարգապահութեան կանոններին, բայց մեր քաղաքի յաջորդ վարդապետի եկեղեցում ծանուցմամբ, ինքը նա առանձին ստորագրած ծանուցագրով հրաւիրում է նոյն եկեղեցու ժողովրդականներին ամսոյս 8-ին անցեալ տարւայ գործը քննելու նոր երեցփոխան ընտրելու, նոյնպէս իր 1880 թուականի եկեղեցական հաշիւը քննելու համար: Մենք ի սրտէ համակրում ենք և կարող ենք գովել ազ երեցփոխանի բռնած ընթացքը, բայց մի և նոյն ժամանակը չենք կարող չը նկատել, որ կարգը պահանջում է, որ նա—երեցփոխանը իր երեքամեայ հաշիւները տայ և ոչ միայն 1880 թուականի. տարապայմանը այդ որը նոր երեցփոխանի ընտրութիւնը յետաձգվեց մինչև հաշիւները վերադարձնելը. միթէ լաւ չէր լինի, որ ընտրել էին նոր երեցփոխան և նա թէրը հաշւառաներին հետ նստելով ծանօթանար եկեղեցու հաշուի մասից և ծախսից հետ:

Նոյն անցից մեզ գրում են. Քաղաքիս յաջորդ վարդապետը որ բարեկենդաններին գնացել էր իր հայրենիքը՝ Շուշի, պատի երկրորդ շաբթին, հասարակ ժողովրդի անհամբերութեանը վերադառնալով, իր սրանչելի քարոզներով մխիթարում է մեզ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Արժանահաւատ աղբիւրներից լսում ենք, որ Մ. եպիսկոպոս Սմբատեանց շուտով հրատարակելու է Ս. Գրիգոր Լուսաւորչի ազգաբանութիւնը, զանազան պատմական փաստերով հաստատելով, որ մեծ սրբի սերնդից այժմ էլ կան ներկայացուցիչներ, որոնց մէկն է մի բարձրաստիճան հոգևորական Էջմիածնի միաբանութեան մէջ. Նոյնպէս լսում ենք, որ սրբազանը դիմել է նորին վեհափառութեանը խնդրելով, յանձնել իրան Երևանի թեմի առաջնորդութիւնը և ներկայացրել է իր ապագայ գործունէութեան և այն բարենորոգութիւնների նախագիծը, որ ի նկատի ունի իրագործել: Այդ պաշտօնը նա յանձն կառնի միայն այն պայմանով, որ [illegible]»

—

ԴՈՒՇԵԹԻՑ մեզ գրում են. «Մեր երկու քահանաները իրանց շատ անվայել կերպով են պահում. Այս օրերս նրանք միմեանց մէջ կռւեցին և միմեանց ծեծեցին»:

—

Ռուս լրագիրները որպէս լուր հաղորդում են, որ թագաւորասպան Րիսակովի հայրը անձնասպանութիւն է գործել:

—

Այս օրերս պ. Բուհաթրեան, «Тифл. Объявленія» լրագրի նախկին խմբագիրը հրատարակեց մի բրօշիւր մեր փոխադարձ կրեդիտի բանկի մասին հետևեալ վերնագրով «Наше общество взаимнаго кредита.» Այդ բրօշիւրի մէջ հեղինակը այն միտքն է յայտնում որ մեր այդ հիմնարկութիւնը մի խոշոր պակասութիւն ունէր իր առաջին գոյութեան ընթացքի ժամանակ, այն է որ նա չունէր իր անդամների մէջ երկու տարբեր տեսակները և համապատասխան կերպով չէր ծառայում նրանց շահերին. Անդամներից ոմանք ռանտիէրներն էին, որոնք վայելում էին ամենամեծ և ամենաէժան կրեդիտ, Միւսները, մինչև և փոքր կարողութեան տէր մարդիկ վայելում էին անհաւասար կրեդիտ: Հեղինակը առաջարկում է որպէս միջոց ժողովրդի մէջ հաւասարութիւն ծնեցնելու գնալ Թիֆլիսի փոխադարձ կրեդիտի ընկերութիւնը, մինչ հրապարակաւոր յայտնել ինչպան կրեդիտ ունի ընկերութեան ամեն մի անդամ: Հեղինակը ապացուցանում է իր այդ առաջարկութեան օգտաւէտութիւնը:

—

Գ. Գրիգոր Շահնազարեանցից թարգմանած գրքոյկը «Մտաւոր, ֆիզիկական և բարոյական դաստիարակութեան մասին» շատ օգտակար և հետաքրքիր գրքոյկ է. Դա բաժանվում է երեք մասի վրա. մտաւոր դաստիարակութիւն, ֆիզիկական դաստիարակութիւն և բարոյական դաստիարակութիւն: Գիրքը որ անգլիացի Ջօն Սպենսեր Բէլէնի հեղինակութիւնն է, պարունակում է իր մէջ շատ օգտակար կենսական խորհուրդներ: Ամեն մի հայի խորհուրդ ենք տալիս առնել և կարդալ պ. Շահնազարեանցի թարգմանութիւնը, մանաւանդ որ նա գրված է հասկանալի, թեթև, զուտ հայեան լեզուով և շատ հեշտութեամբ, պարզութեամբ և վերին աստիճանի համառօտութեամբ է կարգադրված. Գինը 60 կոպէկ է. Շատ ուրախալի է որ մեր երիտասարդները սկսում են այժմ աւելի ընտրութիւններ անել իրանց թարգմանութիւնների համար:

—

ԶԱՔԱԹԱԼԻՑ մեզ գրում են. «Այստեղի հայերը օրիորդական դպրոց չունեն, բայց ոմանք իրանց աղջիկներին օտար լեզուով են դաստիարակում. քանի որ աղջիկները դեռ իրանց մայրենի լեզուն չը գիտեն. Դրա հետևանքն այն է որ իրանց մայրենի լեզուն չը գիտցող աղջիկները, օտար լեզուն էլ շատ վատ են սովորում և անկարող են նրան տիրապետելու: Այդպիսով նրանք ոչ հայ են և ոչ օտարազգի»:

—

Զաքաթալից մեզ հաղորդում են հետևեալ գները առաջին հարկաւորութեան մթերքների. Մի ամիս առաջ ցորենի ալիւրը 2 ր. 24 կ. էր, բրինձ 3 ր. 20 կ., իսկ այժմ ցորենի ալիւրը արժէ 1 ր. 20 կ., բրինձը 2 ր. 10 կ., գարին 70 կոպ., կորեկը 30 կոպ. Ցորենի առևտրական գնացը մեծ վնաս է անում: Այս տարի, ինչպէս երևում է, մեծ առատութիւն կը լինի Զաքաթալի կողմերում:

—

ԿԻԵՎՈՒՄ հրէաները առևտուր են անում սուրբ պատկերներով, խաչերով և այլն. Կիէվի քաղաքային վարչութիւնը հարց է զարթեցրել, թէ կարող են արդեօք հրէաները առևտուր անել խաչերով և սրբերի պատկերներով, որոնք համարվում են քրիստոնեաների երկրպագութեան առարկաներ, և արդեօք այդ մասին չը կայ առանձին արգելառիթ հոգևոր վարչութեան կողմից, քանի որ այդ տեսակ առևտրի մասին ոչինչ չէ ասված առևտրական օրէնքներում: Հոգևոր վարչութիւնը անհրաժեշտ համարեց միջնորդել, որպէս զի արգելվի հրէաներին առևտուր անել սրբերի պատկերներով և խաչերով, մանաւանդ Կիէվում, որտեղ լցվում են ուխտաւորները Ռուսաստանի ամեն կողմերից: Ինչպէս լսվում է այս մասին հրէաների իրաւունքները օրէնսդրական կարգով սահմանափակելու հարցը առաջարկված է մինիստրութեան եզրակացութեանը:

—

Այսօր, մարտի 21-ին, շաբաթ օր, պ. [illegible] կը կարդայ Թիֆլիսի կրուժոկում իր դասախօսութիւնը Չինաստանի մասին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՏԱԼԻԱ

Լրագիրները հաղորդում են հետևեալ տեղեկութիւնները:

Նորերումս Հռոմի մէջ մի ժողով կայացաւ, որին մասնակցեցին Իտալիայի բոլոր ընկերութիւնների և միութիւնների ներկայացուցիչները և որ կազմվեցաւ միութեանը յայտնելու համար, թէ ընտրական ձևը Իտալիայի մէջ արմատական փոփոխութիւնների պէտք ունի: Այդ ժողովի խորհուրդները և վճիռները չափազանց արմատական բնաւորութիւն ունէին. ժողովը չը բաւականացաւ նրանով, որ բոլոր արժանաւորների քաղաքացիութեան իրաւունք ունենան, այլ այդ բանը պահանջեց նոյնպէս և կանանց համար: Դա հանրապետականների կէտը և ապագայ նախատեսող քաղաքագէտների ժողով չէր, այլ Իտալիայի այժմեան դրութիւնից անբաւական մարդկերանց ժողով, որ հարկաւոր համարեց յայտնել իր բողոքը կառավարութեան դէմ:

Ընտրողական հարցի վերաբերութեամբ այժմ Իտալիան այն դրութեան մէջ է, ինչ դրութեան մէջ եղել են միւս պետութիւնները, երբ զանազան հանգամանքների շնորհիւ հասարակութեան պահանջները երկար ժամանակ բաւականութիւն չը ստանալով, արտայայտվել են յանկարծ և անկարգ ձևով: Պարլամենտական աշխատանքները ընտրողական հարցի վերաբերութեամբ շատ ինքնուրոյն կերպով են կատարվում և մեծ մասամբ անպտուղ են մնում: Ընտրողական հարցը իտալական պարլամենտի մէջ շատ անգամ բարձրացրած է թէ կառավարութեան և թէ պատգամաւորների կողմից: Շատ անգամ ներկայացրած են պարլամենտին ընտրողական ձևի վերանորոգութեան նախագծեր, որոնք յանձնվել են մասնա-

---

ուտում էին և մասամբ թաղում գերեզմանի վրա: Այդ ցեղերի հաւատալիքները և հաւատքն համանման, բայց ցեղակիցներից ուրիշ օտարական չէր կարող ներկայ գտնուել, ինչպէս զոհաբերութեանը, այնպէս և ճաշկերոյթի կատարելու ժամանակը. մինչև անգամ եթէ մի օտարական տեսնէր այս ցեղական սրբագործութիւնը, դա կը համարվէր սրբապղծութիւն (տես «La Cité Antique» Justel de Coulangé-ի. Liv. I. chap. I—IV. երես 7—38.) Ուստի բնական է, որ ցեղական խնջոյքներին մասնակցում էին միայն ընտանիքի կամ ցեղի անդամները և ուրեմն «հաղորդ հացը» ուտում էին սրանք և ոչ օտարականներ: Այս սովորութիւնը ունէին հին հնդկացիք, հռոմայեցիք, յոյները և գերմանացիք:

Եթէ ընդունենք՝ թէ հայերը հնդեւրոպական ազգերի թւին են պատկանում, եթէ ընդունենք այն հեղինակ միտքը, թէ բոլոր ցեղակից ազգերի սովորութիւնները բուն մէջն մասին մի և նոյնն են, պարտ ենք թոյլ տալ որ մեր նախնիքը ևս ունէին այս սովորութիւնները, երբ դեռ ընտանի-ցեղական կեանքով էին ապրում: Նա մանաւանդ՝ որ նախնեաց «հոգեպաշտութիւնը» մեռելոցները և գերեզմանատանը կերակուր բաժանելը որքան մեզ է յայտնի, մինչև այսօր էլ դեռ չեն կորցրել իրենց նշանակութիւնը: Քրիստոնէութիւնը տուել է մեռելոցներին միմիայն եկեղեցական ձև: Այս հիման վրա կարծում մենք չենք սխալվի, ասելով թէ յիշեալ աւանդը չարադրված է հին կռապաշտութեան ժամանակից: Այժմ առածների ու ասածների նշանակութիւնը: Մեր երգասացների կարգերը չեն զանազանվում իրարից ոչ թէ առածները ասածներից, այլ շատ անգամ նրանց տեղ գործ են ածում հասարակ նախադասութիւններ և մաղթանք: Վեր առնենք օրինակի համար «Սիրով Հայաստանին» և գուշ կը տեսնենք առածների չորրորդը հետևեալ համարակ մասերը: 1. «Աստծու լոյսը համի. 2. Բերան չէ տանար է. 3. Լուսը լուսարի. 4. Հոգը խաբար չը տանի». Միթէ սրանք առած կամ ասածներ են. Ինչպէս երևում է պ. Ա. Գրիգորեանցը բոլորովին հասկացողութիւն չունի առածների և ասածների մասին:

Մենք վերջացրինք մեր նկատողութիւնը ժողովրդական գրականութեան երկու տարբերի մասին,— բանաստեղծութեան և առածների: Մենք ակնարկեցինք մի քանի երգեր և առածներ, ցոյց տալով նրանց նշանակութիւնը համեմատական ազգագրութեան (сравнительная этнологія) կէտից: Պարզ է այժմ ինչ նշանակութիւն ունի մի որ և իցէ ազգի ժողովրդական գրականութեան հաւաքելը ուսումնասիրելը և հետազօտելը:

IV. Մի քանի երգերի դասակարգութիւնը.

Դառնալով կրկին մեր ժողովրդական բանաստեղծութեանը, մենք բերում ենք այստեղ մի քանի երգեր. Նախ՝ կաշխատենք նրանցը դասակարգել (классифицировать), երկրորդ՝ մեր ուշադրութիւնը կը դարձնենք նրանց գլխաւորապէս ազգագրութեան կէտից, կը բացատրենք նրանց ծիսական նշանակութիւնը.

a) Պատմական երգեր.

1. Վարդանայ պատերազմը.

Ավարայր (*) խէժած (հեռած) կարմիր ջուրն
(ջուր)
Գնաց խաստա (հառաչ) Մասիս սարին.
Զրնէն (բուրդ) գոչում (գորդ) գլխին ժողվեց
(ժողովեց).
Մասեա սարին իրեք (երեք) որ կովեց (պատերազմեց),
Լանգ-թէմուրի զօրուն ջարդեց (կոտորեց).
Ավարայր խէժած կարմիր ջուրն,
Ալբը թաշից (նայեց) սև ամպերուն (ամպ).
Գէլուն վերն մնտած երկինք,
Մէջ ամպերուն Աստուածածնու գօտին (*)
(գօտի).
Աստծու խորհշան (հրեշտակ) երկնքէն իջաւ,
Ավարայրին ձէն տուաւ (գոչեց).
«Վարդան, Վարդան խէրիք (հերիք) կովես.
«Անորինին արուն (արիւն) թափես».
Ավարայր գիր թուղ (առ) ի բուն գրկի.
Դըրեք (գրեա) կախում, մէջը ծածկ.
Լանգ-թէմուրը գիր թուղ քաշեց.
Ավարայրնայ գլուխ կտրեց (կտրից).
Ավարայր գլոսէն (գլուխն) գլխից վերուց
(վեր առնել).
Խէժու ջուրն ու չամ փախուց,
Գնաց, խաստա Մասիսա սարին,
Գլուխ պահեց (պահել, թաքցնել) մէջ մութ
էրան (այր).

Այս թանգայէն երգի մէջ ներկայացրած է Վարդանայ պատերազմը. Երգի հեղինակը շեղված է պատմութիւնից, որովհետև Վարդանը, ինչպէս յայտնի է պատմութիւնից, պատերազմեց պարսից դէմ և ոչ թէ Լանգ-թամուրի (Тамерланъ), որը ասպատակեց Հայաստան միայն XIV դարում.

Երգի բովանդակութիւնը համարեա համապատասխան է ժողովրդի աւանդութեան. Վարդանը ժողովելով իր բոլոր զօրքը, գնում է Մասիս լեռան ստորոտը Լանգ-Թէմուրի դէմ պատերազմելու. Երեք օրեայ պատերազմից յետոյ Վարդանը կոտորում է Լանգ-Թէմուրի զօրքը: Բայց յանկարծ երկինքը ամպում է և ծիածանը (Աստուածածնայ գօտին) կամարը կապվում է երկնքում. Հրեշտակը իջնելով Վարդանին, հրամայում է արիւնահեղութիւնը վերջացնել. Բայց նշմարելով Աստուծոյ կամքին, սուրը ձեռքը գնելով հեռանում է իր զէնքը և Լանգ-Թէմուրը նրան սպանում է: Ավարայրի լեռան Վարդանը, վէր է առնում իր գլուխը, հեռանում է ջրերն և փախչում Մասիս սարը. Մասիսայ մոթի մէջ ջրերն նեղանում է և էլ չէ կարողանում փախչել. Վարդանը իջնելով ջրից՝ նստում է ջրերն առկլ [illegible] քը ծնունդը չորանայ: Այս օրից ջրերն կորցնում է իր ծննդական ընդունակութիւնը: Մեր ասածին ժողովրդի կարծիքով Վարդանի անէծքն է պատճառը, որ ջրերն չէ կարող ծնել. Աստից յետոյ Վարդանը պատսպարում է մի մեծ քարի, որը նրա ճանապարհը կտրում է. սուրբ գլուխը քաշելով, Վարդանը դարձնում է և քարքը բաժանվում է երկու մաս, ճանապարհը բացվում է նրա առաջ: Վերջապէս Վարդանը հասնում է մի մութ այրի, որտեղ և թաղվում է իրեն նշխարական գլխով: Մի ուրիշ աւանդութեան համեմատ Վարդանը պատերազմում է պարսից դէմ Կոլբին Մասիս լեռան մօտ և ոչ Տէմուր զօրի առջև. Աւարայր դաշտում Մեր առաջին ժողովրդի շատ մասը մինչև այսօր էլ Մասեայ սարը անուանում է «Աւարայրի դաշտ».

Այս երգը մենք առաջին անգամ լսեցինք աչուղ Սարգսից. Նա թէպէտ Նոր-Բայազետի գաւառիցն էր և, եթէ չենք սխալվում, Դաշչին գիւղից. Աչուղ Սարգսից յետոյ մենք շատերից խնդրեցինք երգել Վարդանայ երգը, բայց իզուր, որովհետև ոչ ոք նրանցից, բացի ընդհանուր աւանդութիւնից Վարդանայ մասին, այս երգը չէր գիտում: Մենք շատ աշխատեցինք բացատրել՝ թէ ինչու այս երգը ընդհանուր ժողովր-

---

*) Ավարայր = աւար + Վարդան.

*) Աստուածածնու գօտի = ծիածան.